Վիճակագրական տեղեկութիւնք 'ի վերայ Պարսից[1]:

Շահ 'Լասըր-էտ-տին, ծնաւ յամին 1829, յաջորդեց յամին 1848 իր հօրն Մէհէմմէտ Շահին։

Պարսից աշխարհքին մակերևոյթն է իբր 26,000, կամ իբր 26,450 քառակուսի գերմանական մղոն, հանդերձ 10 միլիոն բնակչօք. որով հաղիւ 400 բնակիչ կ'ընկնայ առ մի քառակուսի մղոն։ Այս բնակչաց աւելի քան 3 միլիոն թափառական կ'ապրին. երկրագործ ժողովուրդն որ աւաններու և գեղերու մէջ հաստատուած է, կ'ելլէ իբր 4 միլիոն. իսկ միւս 3 միլիոնքն են քաղաքաց բնակիչքն. իսկ քաղաքաց գլխաւորքն են Սպահան իբր 180,000 բնակչօք, Դաւրէժ իբր 160,000 բնակչօք, Դէհրան 120,000 բնակչօք, Մէսչէդ 100,000 բնակչօք։ Իսկ կրօնիւք Մահմատական են, այսինքն $7^1/_2$ միլիոնը շիական, $^1/_2$ միլիոնը հերձուածողք այլ և այլ աղանդաց, $1^1/_2$ միլիոն սիւննիք, և մնացած $^1/_2$ միլիոնն ալ են քրիստոնեայք (Հայք 200,000, Լեստորականք 100,000,) Հրէայք կրակապաշտք, կռապաշտք։

Լրտ Ա Ռոպ.

Հոգևոր գանձուն (Պէյդ-իւլ-Մալ) մուտքն հետևեալ կերպով կը հաստատուի.

Դին վաճառման արգասեաց	Դուման	1,500,000
Հարկ կալուածոց Ռաճայից	,,	500,000
$^1/_8$ հարկ 'ի վերայ ամենայն եկամտից	,,	220,000
Կամուրջք և ռահվիրայք	,,	200,000
Ռաժ հանքաց	,,	80,000
Ռովանդակ Դուման		2,500,000

այս գումարը կը գործածուի մզկիթաց պահպանութեանը, դատաւորաց հատուցմանը, մահմէտական աղքատաց ողորմութեանը, ընդհանուր հասարակաց օգտակար շինուածոց պահպանութեան ինչպէս են բաղանիք, կամուրջք, դպրոցք, սուրբ տեղեաց ուխտապնացութեան ծախուց, մարգարէի ցեղէն իջողաց եկամտիցն ու կրօնաբարոյն համար եղած ծախուցն։

Ընդունի գանձուն մուտքն է		
Ընդունական կալուածք	Դուման	1,250,000
Ընդունի պարգևական վիճակք	,,	2,000,000
Հարկ եկամտից	,,	1,000,000
Փոյլտուութիւնք, տուրք արուեստից	,,	1,200,000
Մաքս վաճառուց	,,	650,000
Տուրք թափառական ժողովրդոց	,,	600,000
Ընձնական հարկ Ռաճայից	,,	300,000
Ռովանդակ Դուման		7,000,000

Այս գումարիս վրայ պէտք է յաւելուն արտաքոյ կարգի ընծայից գինը, զոր կ'ընդունի Շահն, մանաւանդ տարեգլխին։ Յամին 1858 Շահն արգիլեց գաւառակալաց, որ ամենևին ընծայ չդունին անկէ ետև։ Ընդունի գանձը գործածուի Շահին առանձին և քունեաց առանձին ծախուցն, և ամենայն հասարակաց ծախուց՝ չեն վերաբերիր հոգևոր մեծ գանձ

1. Ըստ Գերմանացի Dr. O. Blau այ, Commercielle Zustän de Persiens, Գեռլին 1858։

Պարսից տէրութիւնն հասարակաց պարտք չունի, վասն զի յաւելուածական ծախքն արտաքոյ կարգի տրօք, տուգանօք, և այլնկը գոցուին։

Բանակն յամին 1857 ունէր 12,000 կանոնաւոր հետևակազօր, 4,000 կանոնաւոր հեծելազօր, 2,000 թնդանօթաձիգ, 100,000 գաւառական զօրք, և 80,000 անկանոն զօրք. բովանդակ 198,000 հոգիք։

Կատարած գեղազարդ առուր գարնայնոյ։

Տուընջեան հրանուտ աստղն ըզլերամբք խոնարհի,
Եւ քաղցրաքուն Օֆիւռ հովտացն ի ծոցի
Ոսթափ յածեալ ընդ դաշտորայս բոցակէզ
Ըզծաղկածին ցօղսըն տեղայ ցիր ընդ սէզ.
Ալընձուին երեսք ալեացն ի հողմ զուլագին,
Եւ եղեգանց ծայրք ի շընչոյն մէտ կրքին։
Սրփուին ըստուերք. ուլ դուք պուրակք հովանուտք,
Կալ ընդ դալար ձերդ հովանեաւ ինձ թոյլ տուք.
Թոռղ հընչեսցեն և այս յետին մի նրւագ
Բաղցր երգք մայրեաց եւ սահանաց կարկաչանք։
Ի կատարաց լերանց՝ մերձեալ հուսկ մրտին
Դեռ ծիծաղի տիւ ընդ ծաղկունս իւրածին.
Դեռն ի գընացս ըսկայընթաց իւր ալեաց
Պարզէ տակաւ ի փրրփրադէզ ջուրս թափանց
Ըզթանձր եւ մոգ կանաչ մայրեաց գետեզեր.
Ներշոյլ նրւաղ զոստոց տերեւն հերձու դեռ.
Ըզբարձրաբերձ տանեաց քարամբք կապուտակ
Յայտեն ի բաց պայծառ երփնից փայլքն յրստակ.
Եւ հրակայծակ շանթք ապակւոյն ընդ անտառ՝
Շ լայեալ աչաց թրւի հրրդեհ բոցալառ։
Ահա գարնան խօսի երգիչն ի մայրւոյն,
Եւ քաղցր երեկ գոգցես ածէ խանդս երգոյն.
Հեշտ են նրւագքն եւ խանդակաթ դայլայլիկք,
Եւ մինչ ախորժ ի լուր նորին կան մայրիք,
Ի թուփ փրշուտ եւ ծեր կընձնեացն առ արմին
Ոունջն Ադրակնէ պարզէ ըզթեալս ոստայնին.
Յեզերս ալեաց անկեալ բրզիկն հողմավար
Տրզզայ գընայ ըզձանապարհ իւր թափառ,
Եւ զտերեւովք յածեալ ըզձիւք քաղցր հեշտի,
Ի հուսկ ձաձանչս արփւոյն փայլեալ՝ մեռանի։
Լ ղրամարգին՝ նրժդեհ յափունքս իբրեւ զիս՝